

թիւն առ ։ Եալէ շապիկդ հան, գնմա, այլով քըսպիզ ին անհամա ու քրով լուամ՝ շխակուի, իս ունաւար փուս վարդի ջրով կիտակուի. Ծալ տամ, ծոցիս փուեմ, Փոշին թալեմ, նոր փուեմ:

**Նոյնը և կայ և Համօվ Հոտով եր. 310, միացած ուշիշ խաղերի հետ.**

Եկար ու անցար, դիշեր չմնացիր,  
Նարդ ու շապիկդ թողիր գնացիր.  
Լուամ, լուամ, շխարեկի.  
Բերնիս փուժավ փոշին հանեմ:  
Շուռ տամ ու ծալ ծալ անեմ:  
Նոյնը դանսում ենք դարձեալ Զաւախրի Բուրմունք  
եր. 20, ուրիշ երգերի հետ միացած.  
Չ աւախրից Շօ մանչ, տուր չուխադ լուամ, ըլոր ուղարկեան  
առ Յ Աւամ, լուամ, շխարեկի, զանգիմինա  
վարդն ին Վարդի ջրով իսարեկի.  
Լուամ ու քարին ձգեմ,  
Թափ տամ ու ծառին ձգեմ,  
Շալեմ ու ծոցս զնեմ:

(Կը տարունակուի)

**Մ. Ս. Ա. Ք. Ե. Խ. Ա. Ա. Ա. Ա. Ա.**

### Անջեղև ԴԱՐԵՐԻ ՑԻՇԱՏԱԿ,

1888—91թ վիսանոսդ Եե Կարսի լիճակում: Պաշտօնիս  
պարագաւութեամբ լիճակին այցելելիո՞ ընականաբար պէտք է  
հետաքրքրուելի հնութիւններով էլ: Ըստարձակ տեղեկադերը  
թողնելով ուրիշ անդամի՞ այժմ կազեսը եմ համարում Հ. Ալե-  
շանի Նիւրակում շհրատաբակուած մի քանի արձանագրեսը  
հրատարակել:

Ա. Տ. Տ. Ո. Ո. Բ. Վ. Ա. Ա. Ա.

Տայլարի արեմտեան գրան և լուսամտի վելե մի բարձրա-  
քանդակ կայ, որ պատկերացնում է միմեանց հանգէպ վազող  
երկու առեւծներ, որոնք կամենում են փողոտել երկու եղնիկ:  
Այդ քանդակի վեսե եղծուած տառերով կայ մի անվերծանելի

արձանագիր։ Եուոր ջանքս այդ արձանագիրը կարդալու ունեցաւ հետևեալ թէական արգիւնքը։

\* \* \* . . . մասրի և քաւարան Խաչատռը . . . \*

Տաճարի հիւսիսային պատին, արտաքուստ, արևելեան կողմից սկսած երկրորդ քարի վերայ անարուեստ ձևով գրուած է։

\* Զ.

\* Տէր Քրիստոս ողորմեա Դրիգորիոսի անարժան ծառայ քահանայի։

Եթէ Զ. տառը ընդունենք թուական, պէտք է ենթագենք, որ Փառակ 1451 թուին Տայլարը շէն էր և մարդաբնակ։

Այս արձանագրից ոչ շատ հեռու կայ և մի արաբական տառերով արձանագիր։

Հ. Ալիշանը Սարդիս վարդապետ Զալալեանից ընդօրենակելով մի արձանագիր, կարծում է, որ Եօթն խորանեան կուսուած եկեղեցին Տայլարն է, ուրեմն և արձանագրութիւնը Տայլարինն։

Տայլարի տաճարը համարեա մի փոքրիկ մատուռ է և հազեւ թէ կոչուէը Եօթն խորանեան։

### Բ. ՀՈՅՈՄԲՈՍԻ ՎԱՆՔ.

Հոյոմսոսի տաճարի համարեային որմի վերայ արտաքուստ։ «Թիվն. Հայոց ՌՅԲ. և յամի Փրկչին 1853. Ողորմութեամբն Աստուծոյ, Եռ, Ա.արդան վարդապետ Օձնեցի և հիմանէ շինեցի զառաջնորդաբան և միաբանից զութն սենեակ, զմի տնտեսուն իւր համբարանոցաւ յաւուրս առաջնորդութեան իմոյ և վանքն հուսմոսի, առաջնորդական արդեամբո Կարսայ և յիշատակ հոգուոյ իմոյ և աղգիս հայոց արդ, աղաչեմ յիշել զիս և զազգն իմ հայոց առաջի Քրիստոսի, որոյ մշակ պարտաւոր համարիմ զանձկ իմ և խնդուեմ և յաջորդացդ իմոց շէն պահել զվանոս ուպէս տուն Աստուծոյ աղգիս Հայոց»։

Վ.արդան վարդապետ Օձնեցին է Վ.արդան արքեպիսկոպոսը, որ իւր ծերաւթեան վերջին օրերը անց էր կացնում Սանահնում, ուր և վախճանուեց 1897 թուի փետրվարի 28 ին և թագուեց իւր ծննդավայր Օձուն դիւզում։

Հանդուցեալ Վ.արդան արքեպիսկոպոսը, պաշտօնավայրութեան մէջ հանդիսանում է—Հոյոմսոսի վանքի առաջնորդութեան ժամանակ՝ շինարար, իսկ Ալէքսանդրապոլի փոխանորդութեան ժամանակ՝ ուստիմնամէր մարդ։ Ալէքսանդրապոլի նախկին վիճակային դպրոցը իւր սկզբնաւորութեամբ պարտական է Վ.արդան արքեպիսկոպոսին։

Հոռամնով՝ առաջնորդականի լու օսմուտներից մէկի բարաւորի քարը կը ուժ է հետևեալ արձանագրութիւնը։

«Ենորհիւ Տետուն նորոգեցաւ որբոյ վանաց զանկակատունն շրջակայ պարոպաւու պարագայիւքն ի թուոջն ՈՄԼ.Է.ին սկսեալ իշխողութեամբ Ալիքէկին և Մահմատ ըէկին յառուրոՇամբեցի Յովհաննէս վարդապետին, որք հանդիպէք՝ տուք զողորմին Առուտած զծեզ ողորմեցի»։

Ալի և Մահմատ ըէկիերը Խաթուն՝ Օղիկ տան պայտզատներից Են։ Խաթուն Օղիկք Ժառանգաբար աւելի քան երկու դար իշխում էին Արևմտեան Նիրակում իբրև գաւառապետ մինչեւ Ռուսաց լերջնական տիրապետութիւնը։

#### Գ. Խնջկոնք—Բէնքիկիլլ.

**Ս. Սարգիս տաճարի հիւսիսային կողմք.**

ա. «Յանուն Աստուծոյ ՈՒԹ. թուականիս ևս Դաւիթ որդի Դսիկորո, զաւրավար ամիս սպասարարի Զաքարիաի, տեսի զպայժառութիւն սուրբ ուխտիս Խնցկաւնից, ևս և որդիք իմ հարազատք Դսիկոր և Գայլս շէք պարեկ (") և ետու զիմ սեպհական զգիւղն զԼահանա (") Աձեմ, զէկան ի սուրբ Սարգիս յիշատակ ինձ և ծնուղաց իմոց, վասն որոյ հայրո Յովհաննէս և վարդապետու այլ միտքանքս հոստատեցին զԴաւթի և զՅակովիտ, զՊաւղոսի և զՊետրոսի և զուրբ Նողակաթին զպատարագն ամենայն ամի, որ լինի յամեն եկեղեցիքս ինձ առնել անխափան, եթէ ոք հակառակի ի հարանց և կամ ի պատրանաց և զիմ յիշատակ խափանէ՝ որչափ Աստուծած աւրհնած է այնչափ այն մարդն անեծած լինի»։

Այս արձանագրից ոչ հեռու առանձին կտնդնած խոչքարի հարաւային կողին։

Անուամբ Փրկչին մերոյ Քրիստոսի եղեւ վերստին նորոգութիւն վանուցու ի ձեռն աստուծասէք բարեկալաշտ թագուուրին Նահնշահի, որգւոյ Զաքարիայի, ի թուականութեանս Հայոց ՈՒԵ. ի հայրութեան Յովհաննէսի. կամ եղեւ ամենայն եղբարցու և շինեցաք որ անխափան լինի այգի մի և ծմակի նիկանին քաւը Ժամ Մարգարէին, ը. աւը Միսիթարա. այգի մի և Մարմետի ի փաղանդ անդն Ալ—իսի (") զ. տւը պատարագ, ի Մարմետ Վարդիքեցո հողին ա. վարն, ը. աւը պատարագ, ի Կողը խաչին այգին որ Յովհաննէա տուեալ է յիշատակ իւր զոտեցն Մամին ը. աւը պատարագ Մամին (տողամէջ) ա. աւը, Մամքանին այգի մի Թայեկա . . . ի ծովին ը. աւը պատարագ Թամին, ը. աւը պատարագ Մարգոի Փարշկեանց՝ որ երետ ի թարխին ակնէն։ Ժ.

բեռին տեղ յամենայն սեզան է անաշխատ այն վանացո հասոյթք է: Եւս կիրակոս որ էտու զկալուեանց (\*) ի սուբբ ուխտն Խնցկուն ի ծովակին Բանայ գանկն ազատ վանացա:

Այս արձանագրերի համար Հ. Ալիշանն ասում է:

«Ե և այլ արձանագրիր ՈՒԳ. թուտկանաւ, որպէս և միւս ևս ի վերայ մեծի և գեղեցկաքանդակ անջատ խոչ միմի, այլ որմն ընդ մէջ ածեալ երկոցուն խավաննէ զընթերցուած նորին (Կիրակ եր՝ 129):»

Անջատ խաչքարի ճակատին գժուար ընթեռնլի արձանագրիր.

«Քանիզի սո է սեռ և նշան անապակ Աստուծոյ սիրոյն. կամ եղել իմ հաւը Սիրախ կանդնել զխաչս ի ըարեխաւութիւն ինձ եկեղեցպանիս Յիսէի, որ կանք ի թաղման առաջի Ա. Խաչը. հ. Զթ».

Այս արձանագրի մասին ամբոնելին յիշտատկութիւն ըը կայ Հ. Ալիշանի նիրակում:

Սամուել Անեցու ժամանակագրութեան համեմատ (տպ. էջմ. 1893+ եր. 100) Ա. Սարգիս վանքը շինել է Վեստ Սարգիսը հայոց Նիմ: Ամենայն հուանականութեամբ Հայք Սիրան առաջին վանահայրն և Յիսէին առաջին եկեղեցպանը կը լինէին, եթէ չը լինէր Ա. Սարգսից գէպ հարաւ Ա. Աստուածածին հնագոյն տաճարը, որ անշուշտ, երբե վանք ունեցած է իւր վանականները: Ափանս որ Ա. Աստուածածին տաճարի արձանագրերը մաշուած և գժուարընթեռնլի են, այս պատճառով էլ արտագրուած ու տպուած չեն:

Խնցկօնքի հինգ մատուաներից մէկն է Ա. Լուսաւորիչ, որի շրջապատի արեւելեան որմի վերայ, բացի Հ. Ալիշանի առաջ ըեւբած Գրիգոր անեցու տապանագրից կան:

«ԶՈՒՄԻՇՈՆ և զՍոսթենէս . . . . զխաչերս կանգնեցաք, յիշեցէք:

«Քրիստոս Աստուած ողորմեա Ասղաւմսնի . . . .

«Տէր Աստուած ողորմեա Յովհաննեսի:

Մեծ գերեզմանաքարի վերայ, որ գտնւում է՝ մատուակմօտ, շրջապատից ներս, հաղիւ կարդացւում են հետեւեալ բառերը.

«Փոխեցաւ ի Քրիստոս, որ է առ հնեալ յաւիտեանո ամէն»:

#### Գ. ԶՈՒՄԻՇՈՆ.

Կարսի նահանգի Բատեն գաւառակի Զուբուգ գիւղում:

«Յօթ՝ թիւ յանուն Յովսէֆիա քահանայի որ ի ծեռն մատնողաց ի տարապարտուց կողեւու տնձն իմ . . . արդ որ ընթեանուք յազօթու յիշեցէք զնա ի Քրիստոս Յիսուս»:

Հայոց թուական կրազ հնագոյն արձանագրերից մէկն է այս և ցեաեղուած է գիւղական եկեղեցու հիւսիտային աւանդան զատան զբան և բեմը միջն, որմի ճակատին: